ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ ՎԵՐՋԸ

Գրեց՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Անցեալ անգամ*) ամփոփ կերպով ներկայացրինք այն «հայասէր» քաղաքականութիւնը, որ ռուսական ինքնակալութիւնը վարում էր Արեւելքում հարիւր տարի առաջ: Արդեօք հարիւր տարի յետոյ այդ քաղաքականութիւնը փոխուե՞ց:

Այս տեսակէտից, առատ նիւթ են մատակարարում Սորհրդային Միութեան արտաքին գործավարութեան գաղտնի վաւերագրերի մի քանի ժողովածուները եւ, առաջին հերթին, «Ասիական Թիւրքիայի բաժանումը» ստուար հատորը, որ լոյս տեսաւ 1924 թ. Ե. Ա. Ադամովի խմբագրութեամբ եւ ընդարձակ յառաջաբանով: Գիրքը պարունակում է վերին աստիճանի հետաքրքրական եւ արժէքաւոր նիւթեր՝ Ռուսաստանի եւ Դաշնակից պետութիւնների բանակցութեանց գաղտնի վաւերագրերը Թիւրքիայի անդամահատման մասին: Այդ վաւերագրերի մէջ մի կարեւոր մասը վերաբերւում է հայերին, Դաշնակիցների եւ, մասնաւորապէս, Ռուսաստանի հետեւած հայկական քաղաքականութեան: Հէնց այդ նիւթն էլ կ՚օգտագործենք ցոյց տալու համար, թէ Պետրոս Մեծի ու Եկատերինա Բ-ի հայկական քաղաքականութիւնը ի՞նչպիսի ձեւ եւ արտայայտութիւն ստացաւ քսաներորդ դարի սկզբին նրանց ժառանգների գործունէութեան մէջ:

Ինչպէս յայտնի է, 1914 թ. Յունուարին, երկար ու ձիգ բանակցութիւններից յետոյ, ստորագրուեց հայկական բարենորոգումների ծրագիրը: Այդ ծրագրի հեղինակն ու հետապնդողը Ռուսաստանն էր, որ հանդէս էր եկել թիւրքահայ ժողովրդի պաշտպանի դերում:

Երբ սկսուեց համաշխարհային պատերազմը, հայկական հարցով հետաքրքրուող բոլոր շրջանների հայեացքը, բնականաբար, ուղղուեց դէպի Պետերբուրգ: Ո՛չ միայն Պողոս փաշա Նուպարը, որը, իբրեւ կաթողիկոսական պատուիրակութեան պետ, աշխատում էր Եւրոպայում, այլ եւ ռուսահայ ղեկավար տարրերը, ինչպէս եւ Պոլսի պատրիարքական շրջապատը յոյսեր էին դրել Ռուսաստանի վրայ: Այդ յոյսի արտայայտութիւնն էր Ազգային Բիւրոյի գործունէութիւնը եւ կամաւորական շարժումը Կովկասում:

Եւ ռուս կառավարութիւնը չէր էլ ծածկում իր համակրանքը հայերի նկատմամբ: Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը քաջալերում էր հայերի ռուսասիրական տրամադրութիւնը եւ յոյս ներշնչում, որ Թիւրքահայաստանի ազատութիւնը հեռու չէ: Ինքը կայսրը, Կովկաս այցելելու միջոցին, 1914 թուի աշնանը, պաշտօնական տեսակցութեան ժամանակ, ի պատասխան Ամենայն Հայոց Կաթողիկոսի արտայայտած փափաքին, որ, յաղթական պատերազմից յետոյ, հայկական վեց վիլայէթներին ու Կիլիկիային տրուի ինքնավարութիւն՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, յայտարարեց, թէ կաթողիկոսի ցանկութիւնը ամբողջապէս կը կատարուի:

Պատերազմի առաջին շրջանում հայերը — եւ ո՛չ միայն հայերը — համոզուած էին, որ այս անգամ Թիւրքահայաստանի ազատութիւնը հեռու չէ, եւ այդ ազատութիւնը տեղի պիտի ունենայ Ռուսաստանի ջանքերով: Մինչեւ նոյն միջոցին արդէն ռուս դիւանագիտութիւնը ձեւեր էր որոնում՝ խժռելու համար Հայաստանը: Եւ Ռուսաստանի հետ ոչ պակաս սուր ախորժակ էր ցոյց տալիս Ֆրանսան:

Այսպէս, 1915 թ. Յունուար 16-29-ին ռուսական դեսպան Իզվոլսկին Փարիզից հեռագրում է արտաքին գործոց նախարար Սազոնովին անձնապէս, թէ՝ «Այստեղ ուշադրութիւն է հրաւիրել իր վրայ Միլիւկովի յօդուածը հայկական հարցի մասին «Ռեչ»ում, Դեկտ. 5-ին: Պարտք եմ համարում նախազգուշացնել Ձեզ, որ Թիւրքիայի ասիական հողերի բաժանման պարագային, Ֆրանսան, հաւանաբար, կը պահանջէ իրեն համար ոչ միայն

*) «Հայրենիք» ամսագիր Է. տարի թիւ 1